Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.
Թամար Ալեքսանյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության պետ

Գործուղման վայրը և ժամկետները.
ք. Ստրասբուրգ (Ֆրանսիայի Հանրապետություն), 2026թ. սեպտեմբերի 22-25

Հրավիրող կողմը.
Եվրոպայի խորհուրդ (ԵԽ)

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Մասնակցություն Եվրոպայի խորհրդի Կրթության ղեկավար հանձնաժողովի (Steering Committee for Education, CDEDU) 10-րդ լիագումար նիստին

Քննարկված թեմաները.
Նիստի քննարկումների հիմքում ԵԽ-ի «Learners First» կրթության ոլորտի 2024-2030 թվականների ռազմավարությունն էր՝ իր երեք փոխկապակցված ուղղություններով՝ կրթության ժողովրդավարական և քաղաքացիական առաքելության արդիականացում, սոցիալական պատասխանատվության և արձագանքման ապահովում, մարդու իրավունքների վրա հիմնված թվային վերափոխում: Անդրադարձ է կատարվել ռազմավարության իրականացման միջանկյալ գնահատմանը և կրթության ներդրմանը «Եվրոպայի համար նոր ժողովրդավարական դաշնագրի» նպատակների իրագործման մեջ:

Քննարկումների առանցքային թեմաներից էր 2026թ. դեկտեմբերի 3-4-ին Պոդգորիցայում (Մոնտենեգրո) կայանալիք ԵԽ կրթության նախարարների մշտական համաժողովի 27-րդ նստաշրջանի նախապատրաստական հարցերը: Ներկայացվել և քննարկվել են համաժողովի ծրագրային փաստաթղթերը, «Կրթության ոլորտի մասնագետների հզորացումը հանուն ժողովրդավարական Եվրոպայի՝ թվային դարաշրջանում» նախարարական բանաձևի նախագիծը (այսուհետ՝ Նախարարական բանաձևի նախագիծ) և դրա վերաբերյալ անդամ պետությունների առաջարկությունները: Հատուկ անդրադարձ է կատարվել Քաղաքացիական

կրթության եվրոպական տարածքին (European Space for Citizenship Education, ESCE), ուսուցիչների և ուսուցչի մասնագիտության ապագայի վերաբերյալ Սպիտակ գրքին, ինչպես նաև ակադեմիական ազատության իրավական պաշտպանության ամրապնդմանը:

Ժողովրդավարական քաղաքացիության կրթության շրջանակում ներկայացվել են վաղ մանկության կրթության և խնամքի ոլորտի մոտեցումները՝ խաղի, մասնակցության և առօրյա փոխհարաբերությունների միջոցով պատասխանատվության ու ժողովրդավարական մշակույթի ձևավորման շեշտադրմամբ: Մասնագիտական կրթության և ուսուցման մասով քննարկվել է ժողովրդավարական մշակույթի զարգացման նախագիծը՝ համապատասխան կարողունակությունները ուսումնական ծրագրերում, գնահատման և մանկավարժների պատրաստման ու վերապատրաստման մեջ ներառելու, գործատուներին և արհմիություններին ներգրավելու, սովորողների ակտիվ մասնակցությունն ու թվային տեխնոլոգիաների նկատմամբ քննադատական մոտեցումը խթանելու ուղղություններով: Նշվել է, որ վերջնական նախագիծը նախատեսվում է ներկայացնել 2027թ. մարտին:

Բարձրագույն կրթության ուղղությամբ ներկայացվել են ծրագրի իրականացման ընթացքը, քաղաքականության ենթախմբի աշխատանքները, Լիսաբոնի ճանաչման կոնվենցիայի Բյուրոյի և ENIC–NARIC ցանցերի գործունեությունը: Անդրադարձ է կատարվել բարձրագույն կրթության որակավորումների ճանաչման համար թափանցիկության և որակի ապահովման պայմանների վերաբերյալ նոր կոնվենցիայի մշակման առաջընթացին:

Կրթության ոլորտում էթիկայի, թափանցիկության և բարեվարքության հարթակի (ETINED) շրջանակում ներկայացվել է եվրոպական կրթական համակարգերում դպրոցական բաց տվյալների քաղաքականության մշակման ուղեցույցների նախագիծը: Անդրադարձ է կատարվել նաև կրթության ոլորտում խարդախության կանխարգելմանը և դրա դեմ պայքարին՝ ազգային ու միջազգային իրավական կարգավորումների և քաղաքականությունների վերլուծության անհրաժեշտությամբ:

Լեզվական քաղաքականության քննարկումներում կարևորվել է ամբողջ դպրոցն ընդգրկող մոտեցումը՝ սովորողի ընտանեկան (մայրենի) լեզվի, ուսուցման լեզուների և ուսումնական ծրագրով նախատեսված այլ լեզուների փոխկապակցմամբ: Ներկայացվել են լեզվական քաղաքականության ուսումնասիրությունների ու հարցումների ծրագրերը, այդ թվում՝ միգրանտների լեզվական պահանջների և ուսուցման հնարավորությունների վերաբերյալ ԵԽ–ALTE համատեղ հարցումը: Անդրադարձ է կատարվել Լեզուների իմացության համաեվրոպական շրջանակի (CEFR) ընկալման խնդիրների շուրջ 2026թ. հոկտեմբերի 27-ին նախատեսված կլոր սեղանին և ժեստերի լեզուների ճանաչման հարցին: Մի շարք երկրների ներկայացուցիչներ նշել են երկրորդ օտար լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրության նվազումը և բարձրագույն կրթության մեջ անգլերենի գերակշռությունը:

Թվային քաղաքացիական կրթության մասով ներկայացվել են եվրոպական տարվա՝ 2025թ. արդյունքների գնահատումը, երկրորդ եվրոպական ֆորումի արդյունքները և անդամ պետություններում թվային քաղաքացիական կրթության իրականացման ճանապարհային քարտեզի մշակման ընթացքը: Ներկայացման ընթացքում նշվել է նաև Հայաստանի երեք

համալսարաններում թվային քաղաքացիական կրթության դասընթացների ներդրումը՝ ներառյալ մագիստրոսական ծրագրերում համապատասխան սկզբունքների և հետազոտական բաղադրիչի ներառմամբ: Անդրադարձ է կատարվել ԵԽ-ի կրթության գիտելիքների հարթակին և e-Democracy Lab-ում նոր առցանց դասընթացների մշակմանը:

Արհեստական բանականության (ԱԲ) և կրթության քննարկումներում ներկայացվել է 2026թ. սեպտեմբերի 2-ին ԵԽ Նախարարների կոմիտեի ընդունած՝ ԱԲ գրագիտության վերաբերյալ CM/Rec(2026)12 հանձնարարականը: Այն ընդգծում է ԱԲ-ի քննադատական ըմբռնումը, պատասխանատու կիրառումը և մարդու իրավունքների, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության պաշտպանությունը:

Ներկայացվել է նաև կրթության մեջ ԱԲ-ի և թվային վերափոխման կառավարման «COMPASS» համապարփակ շրջանակը: Այն ներառում է ութ ոլորտ՝ կարգավորում, կարողությունների զարգացում, կրթական քաղաքականություն, համակարգի ամբողջական կառավարում, տվյալների կառավարում, մոնիթորինգ և գնահատում, հավասարություն և ներառականություն, որակի ապահովում և նորարարություն: Շրջանակը նախատեսում է կրթական համակարգերի պատրաստվածության գնահատում՝ ուսումնասիրման, ինտեգրման, իրականացման և վերափոխման չորս մակարդակներով՝ ազգային առաջնահերթություններին համապատասխան աջակցության և հետագա քայլերի որոշման համար:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանդիպմանն ընդառաջ գրավոր ներկայացվել էին ՀՀ առաջարկությունները Նախարարական բանաձևի նախագծի վերաբերյալ, որոնք ընդունվել և ներառվել են լրամշակված նախագծում: Դրանք վերաբերում են ուսուցչի մասնագիտության գրավչության և կայունության բարձրացմանը՝ մասնագիտական զարգացումն ու առաջխաղացումը արդար վարձատրության հետ փոխկապակցելու, ինչպես նաև նպատակային խրախուսումներ նախատեսելու միջոցով: Այս համատեքստում ներկայացվել է Հայաստանի կամավոր ատեստավորման և թիրախային ծրագրերի շրջանակում հավելավճարների տրամադրման փորձը: Մյուս առաջարկությամբ ընդգծվել է, որ ԱԲ-ի կիրառումը պետք է օգնի նվազեցնել ուսուցիչների վարչարարական և հաշվետվողական աշխատանքի բեռը, որպեսզի նրանք ավելի շատ ժամանակ տրամադրեն դասավանդմանը, մասնագիտական որոշումներին և սովորողների հետ անմիջական աշխատանքին:

Առանձին քննարկման ժամանակ ԵԽ-ի Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ստորաբաժանման ներկայացուցչի հետ անդրադարձել ենք ՀՀ-ԵԽ 2027-2031 թվականների համաձայնագրի ստորագրումից հետո հնարավոր երկկողմ համագործակցության ուղղություններին:

ԱԲ-ի և ուսուցիչների դերակատարության թեմայի քննարկման ընթացքում անդրադարձել եմ ՏՀԶԿ-ի PISA-2025 գնահատման հրապարակված արդյունքներին՝ նշելով, որ զեկույցի համաձայն, ՏՀԶԿ երկրների սովորողների շուրջ 46%-ը նշում է, որ շաբաթական առնվազն մեկ անգամ ԱԲ չաթբոտեր է օգտագործում սովորելուն աջակցելու նպատակով: Եվ այստեղ

ուշագրավ է այն, որ առաջադրանքների, օրինակ՝ տեքստերի ամփոփման կամ գրավոր աշխատանքների նախագծման համար ԱԲ օգտագործողների բնական գիտությունների արդյունքները ավելի ցածր են այն որպես աջակցող գործիք օգտագործողների արդյունքներից: Այս համատեքստում ընդգծվում է ուսուցչի դերը՝ սովորողներին ԱԲ-ի նպատակային և քննադատական կիրառումը սովորեցնելու, ստացված պատասխանները ստուգելու և սեփական դատողությունը պահպանելու հարցում:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նիստի ընթացքում հաստատվել կամ հավանության են արժանացել հետևյալ հիմնական փաստաթղթերն ու մոտեցումները՝

- Հաստատվել է Քաղաքացիական կրթության եվրոպական տարածքի (ESCE) վերջնական նախագիծը և հանձնարարվել է այն ներկայացնել 2026թ. դեկտեմբերին կայանալիք նախարարական համաժողովին: Լրամշակման համար կարևորվել են մասնագիտական կրթության հաստատությունների դերի հստակ արտացոլումը, հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ու լեզվական բազմազանության հարցերը:
- Հավանության է արժանացել ուսուցիչների և ուսուցչի մասնագիտության ապագայի վերաբերյալ Սպիտակ գրքի առաջին նախագծի ուղղվածությունը: Քարտուղարությանը հանձնարարվել է մինչև հոկտեմբերի վերջ պատրաստել վերանայված նախագիծ՝ հաշվի առնելով ստացված առաջարկությունները, փորձագիտական խորհրդակցությունները և ուսուցիչների ու թվային տեխնոլոգիաների վերաբերյալ հարցման արդյունքները:
- Հավանության է արժանացել ակադեմիական ազատության իրավական պաշտպանության և ԵԽ կոնվենցիայի մշակման իրագործելիության վերաբերյալ զեկույցի նախագիծը՝ որպես հանձնաժողովի պատվերով անկախ փորձագետների պատրաստած աշխատանք: Արձանագրվել է իրավական գործիքի մշակման աստիճանական մոտեցումը՝ նախարարներին առաջարկելով որպես առաջին քայլ հանձնարարել CDEDU-ին մշակել ակադեմիական ազատության պաշտպանության նոր հանձնարարական:
- Հավանության է արժանացել նախարարական բանաձևի վերանայված նախագիծը: Նախապատրաստական խմբին լիազորվել է ավարտել լրամշակումը, իսկ վերջնական հաստատումը նախատեսվել է գրավոր խորհրդակցությամբ և 2026թ. դեկտեմբերի 2-ին Պոդգորիցայում կայանալիք CDEDU-ի հաջորդ լիագումար նիստում: Հայաստանի երկու առաջարկություններն արտացոլվել են լրամշակված նախագծում:
- Համաձայնություն է ձեռքբերվել Եվրոպական կրթական համակարգերում դպրոցական բաց տվյալների քաղաքականության ուղեցույցների նախագծի բովանդակության շուրջ: Նախատեսվել է շրջանառել վերանայված տեքստը:
- Հավանության են արժանացել կրթության ոլորտում գենդերային հավասարության գնահատման՝ քաղաքականություն մշակողների քարտի երեք ցուցանիշների նախագծերը և

կիրառված մեթոդաբանությունը: Հանձնարարվել է մշակել մնացած ցուցանիշներն ու հարցվողների տեղեկատվական նյութը՝ 2027թ. առաջին լիագումար նիստին ներկայացնելու համար: Անդամ պետություններին առաջարկվել է կամավոր մասնակցել փորձարկմանը:

- Մասնագիտական կրթության մեջ ժողովրդավարական մշակույթի զարգացման հանձնարարականի առաջին վերանայված նախագծի վերաբերյալ տրվել են լրամշակման ուղղություններ, և հանձնարարվել է պատրաստել երկրորդ նախագիծ ու բացատրական զեկույց: Վաղ մանկության կրթության և խնամքի վերաբերյալ հրապարակման լրամշակման համար ընդգծվել են խաղը, բնության մեջ ու բացօթյա ուսուցումը և թվային սարքերի հավասարակշռված կիրառումը:
- Ի գիտություն է ընդունվել COMPASS շրջանակի ներկայացումը և ողջունվել է դրա մոտեցումը: Քարտուղարությանն առաջարկվել է շարունակել մշակումը EDU-IA-ի հետ սերտ համակարգմամբ և հաջորդ նիստում ներկայացնել առաջընթացը: Շրջանակը դիտարկվում է որպես կրթության ոլորտի ներդրում ԱԲ-ի, մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության վերաբերյալ ԵԽ շրջանակային կոնվենցիայի (CETS № 225) իրականացման մեջ:
- Ի գիտություն է ընդունվել EDU-IA-ի երկրորդ նիստի հաշվետվությունը՝ առանձին արձանագրելով այդ փորձագետների կոմիտեի որոշումները տվյալների ուղեցույցների շրջանակային փաստաթղթի և կրթական տեխնոլոգիաների գնահատման հղման շրջանակի նախագծի վերաբերյալ: Նշվել է քաղաքականության գործիքակազմի փորձարկումներին մասնակցելու հետաքրքրություն հայտնելու հնարավորությունը, ինչպես նաև գրավոր արձագանքների՝ հոկտեմբերի 8-ի ժամկետը, առցանց հանդիպումը՝ դեկտեմբերի 15-ին, և երրորդ լիագումար նիստը՝ 2027թ. փետրվարին:
- Բարձրագույն կրթության քաղաքականության ենթախմբի նոր լիազորությունների շրջանակի հաստատումը նախատեսվել է 2027թ. մարտի նիստում: Եվրոպական դպրոցների ղեկավարների ասոցիացիայի (ESHA) և Parents International-ի դիտորդի կարգավիճակի դիմումների վերաբերյալ որոշումները հետաձգվել են մինչև մարտյան նիստ՝ լրացուցիչ լսում և տեղեկությունների հավաքագրում իրականացնելու համար:

Արձանագրվել է, որ CDEDU-ի 11-րդ լիագումար նիստը կկայանա 2026թ. դեկտեմբերի 2-ին Պոդգորիցայում:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկում եմ ՀՀ ԿԳՄՍՆ կրթության ոլորտի պատասխանատու ստորաբաժանումների, Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոնի և Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի ներկայացուցիչների հետ աշխատանքային կարգով ուսումնասիրել ԱԲ գրագիտության վերաբերյալ հանձնարարականը, COMPASS շրջանակը և մշակվող քաղաքականության գործիքակազմը:

Նախարարական համաժողովին ընդառաջ նպատակահարմար է քննարկել դրանց կիրառելիությունը Հայաստանի կրթական բարեփոխումների շրջանակում՝ հատկապես ուսուցիչների վերապատրաստման, սովորողների քննադատական ու թվային գրագիտության զարգացման և վարչարարական բեռի նվազեցման ուղղություններով:

Առաջարկում եմ համապատասխան ոլորտային ստորաբաժանումների և մասնագիտական կառույցների մասնակցությամբ ուսումնասիրել «Քաղաքացիական կրթության եվրոպական տարածք» փաստաթղթով առաջարկվող սկզբունքներն ու որակի շրջանակը և քննարկել դրանց կիրառելիությունը Հայաստանի հանրակրթության, նախադպրոցական և մասնագիտական կրթության ոլորտներում: Ուսումնասիրության արդյունքները նպատակահարմար է հաշվի առնել ՀՀ-ԵՄ համագործակցության հետագա ծրագրերում:

Ամսաթիվը, ստորագրությունը
Թամար Ալեքսանյան

30.09.2026թ.